

### **ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

|  |    |
|--|----|
| 6.21.1 Աշխատողների բնակեցում.....  | 2  |
| 6.21.2 Փաստաթղթի շրջանակներն ու նպատակը.....   | 2  |
| 6.21.3 Ամուլսար Ծրագրի աշխատուժի բնութագիր.....  | 6  |
| 6.21.4 Աշխատուժի բնութագիրը.....   | 7  |
| 6.21.5 Հնարավոր աշխատուժի արտագաղթ .....   | 10 |
| 6.21.6 Մեթոդաբանություն .....  | 11 |
| 6.21.7 Հիմնական պայմաններ.....   | 13 |
| 6.21.8 Առկա հյուրանոցային հանգույցները .....   | 14 |
| 6.21.9 Հնարավոր սոցիալական ազդեցությունները – Աշխատուժի բնակեցման<br>տարբերակներ ..... | 14 |
| 6.21.10 Աշխատուժի բնակեցման կազմակերպումները .....                                     | 16 |
| 6.21.11 Հանքի շինարարության փուլի ազդեցությունները .....                               | 40 |
| Հնարավոր ազդեցություններ .....   | 40 |
| 6.21.12 Հանքի շահագործման փուլի ազդեցությունները .....                                 | 43 |

### **ՆԿԱՐՆԵՐ**

|  |   |
|--|---|
| Նկար 6.21.1: Ոչ-տեղացի շինարարական աշխատուժի համար կացարանային պահանջներ<br>(կանաչով)..... | 8 |
|--|---|

### **ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ**

|  |    |
|--|----|
| Աղյուսակ 6.21.2: Սեզոնային արտագաղթողների թիվը 2009, 2014 և 2015թթ .....   | 11 |
| 6.21.3 Ազդեցությունների համառոտագրում մինչ մեղմացումն ու մեղմացումից հետո՝<br>Հյուրանոցներ .....                 | 18 |
| Աղյուսակ 6.21.4. Ազդեցությունների համառոտագրում մինչ մեղմացումն ու մեղմացումից<br>հետո՝ աշխատողների ճամբար ..... | 34 |

### **ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ**

|  |  |
|--|--|
| Հավելված 6.21.1. Սոցիալական ազդեցությունների գնահատման մեթոդաբանությունը |  |
|--|--|

### **6.21.1 Աշխատողների բնակեցում**

#### **6.21.2 Փաստաթղթի շրջանակներն ու նպատակը**

Սույն բաժինը մշակվել է 2016թ. ապրիլին՝ որպես ԲՍԱԳ-ի թարմացված տարբերակ, հաշվի առնելով, որ Աշխատողներին կացարանով ապահովելու տարբերակների ուսումնասիրությունն ավարտվել է 2016թ. ապրիլին:

Համաձայն Աշխատողներին կացարանով ապահովելու տարբերակների ուսումնասիրության գնահատման տարբերակի՝ Ծրագրի ոչ տեղացի շինարարական ախատուժը կտեղավորվի Ջերմուկ քաղաքում և այլ համայնքներում առկա հյուրանոցներում՝ Ծրագրի տարածքից մեքենայով հասնելու խելամիտ հեռավորության վրա:

“Աշխատողների բնակեցում. գործընթացներն ու ստանդարտները” ՄՖԿ/ՎՋԵԲ Ուղեցույցը պահանջում է աշխատողների բնակեցման արդյունքում տեղական համայնքների վրա հնարավոր ազդեցությունների վերաբերյալ գնահատման իրականացում: Սույն բաժնում Ծրագրի կացարանային տարբերակների հետ կապված հնարավոր սոցիալական ազդեցությունները գնահատվել են և առաջարկվել են մեղմացման միջոցառումներ:

Այս բաժնուն ներառված է աշխատուժի բնակեցման երկու հիմնական տարբերակների «հիբրիդի» գնահատումը, որոնք ներկայացված են Աշխատողներին կացարանով ապահովելու տարբերակների ուսումնասիրության մեջ: Ենթադրվում է, որ թե՛ սեզոնի ժամանակ առավելագույնը 397 հյուրանոցային քնատեղեր կօգտագործվեն, իսկ հանգիստ սեզոնի ընթացքում՝ 561, բնակեցնելու Ծրագրի շինարարական աշխատուժին, իսկ ճամբարը կկառուցվի՝ հյուրընկալելու նվազագույնը 500 և առավելագույնը 920 մարդ (շինարարական աշխատանքների թե՛ փուլում ոչ տեղացի աշխատողների մոտավոր քանակն է):

Քանի որ այս գնահատման մեջ ուսումնասիրվում են հյուրանոցները և ճամբարը՝ Ծրագրի աշխատուժին տեղավորելու նպատակով, այդ պատճառով դրա շրջանակներում չի ընգրկվել Ծրագրի հնարավոր ազդեցությունները տեղական հյուրընկալման շուկայի վրա (ենթադրվում է, որ չեն օգտագործվի անկախ ճամբարի

և/կամ հյուրանոցի սենյակներ): Չնայած դրան, հանքի զարգացման հետ կապված տեղի բնակչության կառուցվածքի և/կամ նրանց եկամուտների փոփոխությունները հնարավոր է ազդեն հյուրընկալման տեղական շուկայի վրա. այս ազդեցությունները հաշվի են առնված ԲՄԱԳ-ի մյուս գլուխներում (օրինակ՝ Գլուխ 6-ում):

### ***Ամուլսար Ծրագրի նկարագրությունը***

Ծրագիրը տեղակայված է Հայաստանի հարավարևելքում, Երևանից 170 կմ հեռավորության վրա՝ մի տարածքում, որը հայտնի է Կովկաս անվանմամբ:

Ծրագիրն ընդգրկող տարածքի կոորդինատներն են՝ 39.7824° Հյուսիս, 45.6108° Արևելք ու 39.7210° Հյուսիս, 45.7416° Արևելք:

Տարածքի հիմնական մասը լեռնային է, անհարթ բլուրներով, գետահովիտներով և փոքր-ինչ թեք սարավանդներով՝ ավելի ցածրադիր գոտիներում: Մակերևութային ջրերի արտահոսքը Ծրագրի ազդակիր տարածքների լանջերից նպաստում է Արփա, Դարբ ու Որոտան գետերի ջրհավաքներին: Որոտան գետը հոսում է Ծրագրի տարածքից արևելք, Դարբ գետը՝ հարավ, միանալով դեպի արևմուտք հոսող Արփա գետին:

Ոսկու հանքի պաշարները տեղակայված են Ամուլսարի գագաթին, Հյուսիսային Զանգեզուր լեռնաշղթայի վրա՝ ծովի մակերևույթից 2,500 - 2,988 մ բարձրության վրա:

Ծրագրի ազդակիր տարածքի հողը բնութագրվում է որպես ենթալպյան, լեռնային մարգագետնային լանդշաֆտով, որտեղ, սովորապաբար կան արոտավայրեր, որոնք օգտագործվում են ամռան արածեցման ժամանակ: Ավելի ցածրադիր գոտիներում գյուղատնտեսական հողօգտագործումն ավելի բազմազան է և նպաստում է մի շարք մշակաբույսերի տարածմանը:

Կոնտինենտալ կլիմայի փոփոխությունները զգալի են. նախալեռնային ցածրադիր գոտիներում ամառներն ավելի երկար ու տաք են, միջին ջերմաստիճանը շուրջ 25°C,

իսկ ձմռանը միջին ջերմաստիճանը  $-5^{\circ}\text{C}$  է, լեռներում գրանցվում է  $-12^{\circ}\text{C}$ : Լեռներն ազդում են նաև տեղումների տարեկան քանակի վրա, և ավելի շատ տեղումներ լինում են ավելի բարձր գոտիներում. տարեկան՝ միջինում մոտավորապես 800մմ տեղումները սովորական են Ամուլսարի համար (բարձրությունը մինչև 3000 մ ծովի մակերևույթից): Սարերը ծածկված են ձյունով նոյեմբերից մինչև ապրիլ և այն կարող է գերազանցել 3մ-ը՝ եղանակային պայմաններից կախված:

Ծրագրի ազդակիր տարածքը ձգվում է Վայոց Ձորի (կենտրոնը՝ Եղեգնաձոր) և Սյունիքի (կենտրոնը՝ Կապան) մարզերով: Ծրագրին ամենամոտ քաղաքը Ջերմուկն է, որը գտնվում է ոսկու և արծաթի հանքից դեպի հյուսիս-արևմուտք՝ մոտավորապես 10կմ հեռավորության վրա, և 7 կմ հեռավորության վրա Ծրագրի ամենամոտ ենթակառուցվածքից:

Ծրագրի մոտակայքում կան 4 գյուղական համայնքներ՝ Կեչուտ (համայնք, որ կապված է Ջերմուկի հետ), Սարավան (ներառյալ Սարալանջն ու Ուղեձորը) ու Գնդեվազ Վայոց Ձորի մարզում, և Գորայքը՝ Սյունիքի մարզում: Գնդեվազը ամենամոտն է Ծրագրի հետ կապված ենթակառուցվածքներին (ԿՏՀ-ն գտնվում է գյուղի սահմանից  $>1$  կմ հեռավորության վրա:)

Ծրագիրը նախատեսում է 2 տարի շինարարական աշխատանքներ, որից հետո 11 տարի՝ շահագործման աշխատանքներ: Եթե հետագայում գտնվեն լրացուցիչ կենսունակ ռեսուրսներ, Ծրագիրը կարող է երկարաձգվել: Ծրագրի զարգացման ներկա փուլում, սակայն, ԲՍԱԳ-ը հաշվի է առել միայն ոսկու հանքի շահագործումը, ինչը հաստատվել է նախագծի ուսումնասիրության միջոցով այս օրվա դրությամբ:

### **Ծրագրի փուլերը**

Ծրագիրը կազմված է հետևյալ գլխավոր փուլերից՝

- *Հետախուզություն.* մակերևույթի քարտեզագրում, երկրաբանահետախուզական հորատում և հողի երկրաքիմիական տվյալներ, որոնք օգտագործվել են երկրաբանական ռեսուրսները նկարագրելու նպատակով, հանքի հետագա զարգացման հիմնավորման համար: Ամուլսարում հետախուզական աշխատանքներն իրականացվում են 2006թ.-ից: Հավանական լրացուցիչ հանքաքարերի հայտնաբերման նպատակով տեղանքում հետախուզությունը կշարունակվի և կիրականացվի հանքի շինարարության և շահագործման աշխատանքներին զուգահեռ:
- *Շինարարություն*՝ այս փուլում կառուցվելու են հանքի շահագործման, հանքաքարի մշակման և թանկարժեք մետաղների գտման համար պահանջվող ենթակառուցվածքները, ինչպես նաև օժանդակ շինությունները՝ արհեստանոցները և վարչական շենքերը:
- *Շահագործում*՝ այս փուլում իրականացվելու է ոսկու և արծաթի արտադրությունը (Դորե համաձուլվածքի տեսքով), ինչը ենթադրում է հանքանյութի և դատարկ ապարների փուլային արդյունահանումը բացահանքերից, հանքանյութի մշակումը և դատարկ ապարների տեղափոխումը լցակույտ:
- *Փակում*՝ շահագործմանը հաջորդող փուլ, որի ընթացքում իրականացվելու են բացահանքի, դատարկ ապարների լցակույտի և կույտային տարրավազման հրապարակի վերականգնման աշխատանքներ: Շինարարության ընթացքում կույտված հողի բերրի շերտը կօգտագործվի տեղանքի ռեկուլտիվացիայի և հանքի փակման ընթացքում: Ենթակառուցվածքները կապամոնտաժվեն, և խախտված տարածքները կվերականգնվեն արոտավայրերի կամ Ծրագրի տարածքի ներկայիս կենսամիջավայրերի օրինակով այլ կենսամիջավայրերի:

### **Ծրագրի բաղադրիչները**

Աշխատողների բնակեցման հանգույցները Ծրագրի գլխավոր բաղադրիչներն են, որոնք կմշակվեն Ծրագրի շինարարական փուլում:

### **6.21.3 Ամուլսար Ծրագրի աշխատուժի բնութագիր**

Լիդիանը մշակել է Ծրագրի Իրականացման Պլան (ԾԻՊ) 2016 թվականի հունվարին: Այն ունի Ծրագրի աշխատուժի ակնկալվող բնութագրի հետ կապված օգտակար մանրամասնություններ՝ հիմնված ռեսուրսների գնահատման վերջին Տեխնիկատնտեսական վերլուծության վրա:

ԾԻՊը՝ մի շարք հատվածներ է Ամուլսար ԾԻՊ –ի վերանայված տարբերակից: Այստեղ զետեղված հատվածները պետք է դիտարկել որպես նախնական տարբերակ, և որպես ընդհանուր տեղեկություն բնապահպանական և սոցիալ-տնտեսական որոշ հարցերի վերաբերյալ՝ կապված Ամուլսարի ոսկու հանքի Ծրագրի հետ:

#### ***Ընտանիքի բնութագիր***

Հայաստանում միջին ընտանիքը բաղկացած է 4 հոգուց<sup>1</sup>: Գյուղական ընտանիքները փոքր-ինչ մեծ են քաղաքի ընտանիքներից (4.4 ընդդեմ 3.7 անձի)<sup>8</sup>. Հայկական ընտանիքները հաճախ ապրում են ընտանիքի այլ անդամների հետ՝ թե գյուղում, թե քաղաքային գոտիներում:

Գորայքում, Գնդեվազում և Սարավանում միջին ընտանիքը բաղկացած է 5-7 անդամներից, սովորաբար համատեղ բնակվում են երկու կամ ավելի ընտանիքների հետ միասին: Այսպիսի միասնական ընտանիքների պատճառներն են տների մատչելիությունը, սպառողական գյուղատնտեսության հասանելիությունը աշխատանքի համար, մշակույթն ու ավանդույթները:

Ջերմուկ քաղաքի մոտավորապես 75% ընտանիքներն ունեն երեք կամ ավելի անդամներ, 35% -ը ունեն հինգից յոթ անդամ<sup>2</sup>: Դա պայմանավորված է ամուսնության տարիքում գտնվողների համար մատչելի տների բացակայությամբ: Կեչուտում կա ավելի մեծ ընտանիքներ ունենալու ուժեղ միտում, որտեղ ընտանիքների ավելի քան 55% ունեն հինգից յոթ անդամ:

---

<sup>1</sup> Հայվիճակագրություն, (2014) 2011թ. Մարդահամարի նախնական տվյալները [www.armstat.am](http://www.armstat.am) (հայերենով) հասանելի 2 մայիսի 2014

<sup>2</sup> MPG, (2010), Ջերմուկի և Կեչուտի ելակետային ուսումնասիրություններ

Ընտանեկան կյանքը և միջընտանեկան կապերը անկյունաքարային են տեղական համայնքներում: Հաճախ ընտանիքները բաղկացած են տարբեր սերունդներից, սովորաբար տղաներն իրենց կանանց բերում են հայրական օջախ: Սկեսրոջ ու հարսի հարաբերությունները շատ կարևոր են, սկեսուրն իր հարսների և աղջիկների հետ միասին ղեկավարում է տնային տնտեսությունը:

Չնայած կնոջ դերը մեծ է ընտանիքում, սակայն տղամարդիք են համարվում ընտանիքի գլուխը: Սակայն աշխատանք փնտրելու պատճառով տղամարդկանց արտագաղթի արդյունքում կանանց մի սովոր գանգված է տնօրինում ընտանիքն ու տնտեսությունը: (2007թ. հայկական ընտանիքների 27% գլխավորում էին կանայք:)<sup>3</sup>. Համայնքային հարցերը հիմնականում տնօրինում են տղամարդիկ:

#### **6.21.4 Աշխատուժի բնութագիրը**

##### ***Աշխատուժի քաղաքացիությունը***

Աշխատակիցների մեծ մասը լինելու է ՀՀ քաղաքացի: Ավելին, մշտական աշխատողների մեծ մասը լինելու է հարևան բնակավայրերից՝ Գորայքից, Սարավանից, Գնդեվազից, Կեչուտից և Ջերմուկից, ինչպես նաև Ծրագրի տարածքից 45կմ շառավիղով գտնվող այլ համայնքներից: Այդուհանդերձ, հաշվի առնելով այդ համայնքներում հանքարդյունաբերական ոլորտի մասնագետների պակասը, ակնկալվում է մեծ թվով որակավորված մասնագետներ հրավիրել Երևանից և մարզկենտրոններից: Այն դեպքերում, երբ չստացվի տեղական մասնագետ գտնել որևէ հաստիքի համար, պայմանագրային հիմունքներով աշխատանքի կընդունվի համապատասխան որակավորում ունեցող արտասահմանյան մասնագետները: Ակնկալվում է, որ 3-5 տարվա ընթացքում տեղական աշխատուժը ձեռք բերած կլինի արտասահմանյան մասնագետների մեծ մասին փոխարինելու համար համապատասխան փորձ և կարողություններ:


##### ***Ակնկալվող Ծրագրի աշխատուժի և Կացարանային պահանջները***

Շահագործման ընթացքում ամբողջ աշխատուժը ակնկալվում է որ կկազմի 657 աշխատող: Շինարարության թեժ փուլում օգտագործվող առավելագույն

---

<sup>3</sup> Գյուղատնտեսական զարգացման միջազգային հիմնադրամ (2007). Հայաստան, գենդերային պատկերը, 13 մայիսի 2012. <http://www.ifad.org/english/gender/cen/profiles/arm.htm>

աշխատուժը կազմելու է մոտ 1300 մարդ, որոնցից մոտավորապես 400 կլինեն տեղացիներ: Նկար 3-ում պատկերված է շինարարական աշխատուժի կազմարանային ապահովման պահանջները, շինարարական աշխատուժի տեղացի և ոչ տեղացի կառուցվածքը, որտեղ ակնկալվող ոչ տեղացի աշխատուժի ներկայացնում է պահանջվող քնատեղերի քանակը:



**Նկար Error! No text of specified style in document..1: Ոչ-տեղացի շինարարական աշխատուժի համար կազմարանային պահանջներ (կանաչով)**

Շինարարության փուլում ծանր տեխնիկայի օգտագործման հետ կապված աշխատանքների համար կպահանջվի մասնագիտացված վերահսկողություն արտասահմանյան փորձագետների կողմից: Դրա համար միջազգային որևէ ֆիրմայի /ֆիրմաների/ հետ կկնքվեն Նախագծման, գնումների իրականացման ու շինարարության ղեկավարման պայմանագրեր՝ նախագծման ու Ծրագրի շինարարության կառավարման նպատակով: Ընտրված ֆիրման/ները/ կտրամադրեն գրեթե բոլոր արտասահմանյան խորհրդատուներին, որոնք Ծրագրին անհրաժեշտ են շինարարության փուլում: Այդ խորհրդատուների գործի մի մասն էլ լինելու է տեղական աշխատուժի առավել ակտիվ ներգրավումն ու տեղացի ենթակապալառուների ավելի արդյունավետ օգտագործումը՝ համապատասխան հմտությունների առկայության պարագայում: Շինարարական աշխատուժի մոտ



30% ենթադրվում է, որ կներգրավվի մոտակա համայնքներից: Շինարարության ոլորտի ոչ տեղացի հայ ու արտասահմանցի աշխատողները բնակվելու են տեղական հյուրանոցներում և բնակարաններում Ընկերության այլ աշխատակիցների հետ մեկտեղ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ժամանակավոր շինարարական ճամբարում:

Շահագործման ընթացքում, ոչ տեղացի հայ ու արտասահմանցի աշխատողների բնակեցման հարցերը չեն փոփոխվի: Աշխատակազմի զգալի մասը, մոտ 85%-ը, աշխատելու է արդյունահանման և արտադրական բաժիններում:

Փակումից հետո նախատեսվում է պահել մոտ 20 հոգանոց աշխատակազմ՝ շահագործումից հանված կայանի մոնիթորինգի ու պահպանման գործառույթներն իրականացնելու համար: Աշխատավարձերի չափերը որոշվել են Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտում գործող դրույքաչափերի հիման վրա:

Կախված աշխատանքի բնույթից և աշխատակցի քաղաքացիությունից, շահագործման փուլում նախատեսվում է Աղյուսակ 2-ում ներկայացված հերթափոխային գրաֆիկը:

ՀՀ քաղաքացիների համար նախատեսված են ավելի կարճ հերթափոխներ՝ ՀՀ աշխատանքային օրենսդրության պահանջները բավարարելու համար (աշխատանքային շաբաթվա մեջ ոչ ավելի քան 48 աշխատանքային ժամ):

| <b>Աղյուսակ 2: Հերթափոխային գրաֆիկը Ամուլսարի հանքարդյունաբերական համալիրում</b> |                 |             |
|--|-----------------|-------------|
| <b>Աշխատող</b>   | <b>Հերթափոխ</b> | <b>ազատ</b> |
| հայ – հերթափոխային, 12 ժամյա հերթափոխեր  | 4 օր            | 4 օր        |
| հայ – 8/9 ժամյա հերթափոխեր   | 5օր             | 2 օր        |
| Արտասահմանցի   | 6 շաբաթ         | 2 շաբաթ     |

### **6.21.5 Հնարավոր աշխատուժի արտագաղթ**

#### ***Համաշխարհային աշխատանքային միգրացիա***

1980-ականների մոտ սեզոնային արտագնա աշխատանքի պրակտիկան տարածվեց Հայաստանի քաղաքային կենտրոններում. ամեն տարի 30000-ից 40000 սեզոնային արտագնա աշխատողները մեկնում էին հիմնականում Ռուսաստան՝ աշխատելով գարնանից մինչև աշուն<sup>4</sup>: Սեզոնային արտագնա աշխատանքի պրակտիկան դարձավ սովորական ավելի քան 14% ընտանիքների համար 2006թ., դա կազմում է տարեկան մոտավորապես 100,000 արտագնա աշխատող: Արդեն 2007թ., արտագնա աշխատողները կազմեցին արտագաղթողների 94%, և Հայաստանը լքողների միայն 3% ունեին նպատակ ընդմիջտ ապրել արտասահմանում և 2%՝ սովորել արտերկրում<sup>5</sup>:

Հայաստանի արտագնա աշխատանքի մեկնողների ճնշող մեծամասնությունը 21-50 տարեկան ամուսնացած տղամարդիկ են, միայն 6.5% կանայք են: ԱՄԿ գնահատել է, որ 2006-ին<sup>17</sup> միգրացիայի այս մակարդակը կազմել է տնտեսապես ակտիվ տղամարդկանց 13% -ը և տնտեսապես ակտիվ կանանց միայն 1%-ը:

Սեզոնային աշխատանքների մեկնելու որոշումը հիմնականում պայմանավորված է աշխատանքի սղությամբ: Բարձր վարձատրվող աշխատանք և աշխատանքի լայն ընտրություն կա արտասահմանում: Գյուղերից երիտասարդ տղամարդիկ մեկնում են արտագնա աշխատանքի ռազմական ծառայությունն ավարտելուն պես, առանց նույնիսկ աշխատանքի հնարավորություններ փնտրելու Հայաստանում: Այս ավանդույթը կոչվում է խոպան. սա այն երևույթն է, երբ որոշ գյուղերից տղամարդիկ երկար ժամանակով շարունակաբար մեկնում են արտագնա աշխատանքի:

2009 թվականի համաշխարհային ֆինանսական ճգնաժամը ազդեց Հայաստանում միգրացիոն մոդելի վրա, չնչին կերպով նվազեց (մոտավորապես 2%) արտագնա աշխատողների թիվը՝ թե գյուղական, թե քաղաքային գոտիներից<sup>6</sup>:

---

<sup>4</sup> ՄԱԿ ԶԾ, (2009), Միգրավցիա և մարդկային զարգացում: Հնարավորություններ և մարտահրավերներ, Հայաստան, 2009, [www.undp.org](http://www.undp.org) (accessed 4<sup>th</sup> September 2012)

<sup>5</sup> ILO, (2009), Միգրացիա և զարգացում – Հայաստանի ուսումնասիրություն

<sup>6</sup> National Institute of Labour and Social Research, (2010), Impact of the Global Financial Crisis on Households

**Տեղական միգրացիա**

Հարևան գյուղերում արտահոսքը գերակշռող է, սակայն պակաս զգալի է ազգային մակարդակի համեմատությամբ: Փաստերը վկայում են, որ տեղական սեզոնային արտահոսքը դինամիկ է և 2009-2015թթ. Ժամանակահատվածում փոփոխական է եղել՝ կախված գյուղից:

Եթե Սարավանում, Ջերմուկում և Կեչուտում արտահոսքը նվազել է, ապա Գորայքում որոշակիորեն աճել է: Գնդեվազում պատկերը փոփոխական է, զգալի աճով 2014թ: Համաձայն 2008 թ.-ի Ջերմուկի համար USAIDի կողմից մշակված ռազմավարության, բազմաթիվ ջերմուկցիներ տեղափոխվել են ընդմիջտ արտասահման, գլխավորապես՝ Ռուսաստան, որպես ներգաղթյալ աշխատողներ: Մյուս կողմից ջերմուկցիների մի լայն զանգված՝ համեմատաբար բարձր կրթությամբ, մտածում են տեղափոխվել Երևան՝ ավելի լավ աշխատանք ունենալու նպատակով:

| Աղյուսակ Error! No text of specified style in document..1: Սեզոնային արտագաղթողների թիվը 2009, 2014 և 2015թթ |                               |                       |      |
|--|-------------------------------|-----------------------|------|
| Գյուղ  | Սեզոնային արտագաղթողների թիվը |                       |      |
|  | 2009                          | 2014                  | 2015 |
| Գորայք   | 7                             | 12                    | 15   |
| Գնդեվազ  | 20                            | 71                    | 22   |
| Սարավան  | 20                            | 15                    | 7    |
| Ջերմուկ և Կեչուտ   | Տվյալ չկա                     | 560 (ըստ 2013 տվյալի) | 230  |

Ներգնա միգրացիան ամռան ամիսներին կապված է սեզոնային անասնապահությամբ: Սեզոնային անասնապահները, ովքեր հիմնականում Վայքի, Միսիանի, Խնձորեսկի ու Եղեգնաձորի բնակիչներ են, տեղափոխվում են Ծրագրի տարածք՝ խոտ աճեցնելու ու արածեցնելու իրենց անասուններին (խոշոր եղջերավորներ ու ոչխարներ) արոտավայրերում: 2012 թ. 58 սեզոնային անասնապահներ տեղափոխվել են Ծրագրի տարածք: Ծրագրով քարտեզագրվել է ԲՍԱԳ-ում ճամբարների մոտավոր վայրերը:

**6.21.6 Մեթոդաբանություն**

Հնարավոր սոցիալական ազդեցությունները գնահատելու համար՝ հյուրանոցային համալիրներում և անկախ ճամբարներում աշխատողներին տեղավորելու հետ կապված հարցերը հաշվի են առնվել Աշխատողներին կացարանով ապահովելու տարբերակների ուսումնասիրության արդյունքում ձեռք բերված տվյալները: Աշխատողներին կացարանով ապահովելու տարբերակների ուսումնասիրության թիմն այցելել և ստուգել է Ջերմուկի հյուրանոցները՝ Ծրագրի շրջանակներում գնահատելու դրանց համապատասխանությունը աշխատողների հյուրընկալման համար: Հարցազրույցներ են անցկացվել հյուրանոցի սեփականատերերի ու մենեջերների հետ տեղեկություններ ստանալու հյուրանոցների թողունակության վերաբերյալ, տեղավորելու Ծրագրի աշխատակիցներին, ինչպես նաև հասկանալու, թե ինչ հնարավոր հետևանքներ կարող են ունենալ Ծրագրի աշխատողները հյուրանոցների և այլ տեղական բիզնեսների վրա:

Ինչպես նաև հարցազրույցներ են անցկացվել Ջերմուկի համայնքի առանցքային անձնավորությունների հետ (օրինակ՝ Համայնքի հետ կապի ապահովման կոմիտեի, քաղաքապետի և քաղաքացիական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների), որտեղ քննարկվել են թե կացարանային տարբերակների, թե Ծրագրի աշխատողների ներհոսքի հետ կապված հարցերը: Հարցազրույցների ընթացքում քննարկվել է, թե ինչ հնարավոր ազդեցություն կարող են ունենալ Ծրագիրն ու իր աշխատուժը համայնքի վրա:

Մի շարք հարցեր հարցազրույցից առաջ նախապես պատրաստվել էին՝ հղելու հյուրանոցների սեփականատերերին ու կառավարիչներին, ինչպես նաև՝ համայնքի ներկայացուցիչներին: Կախված տրված տեղեկատվությունից, տեղում այլ հարցադրումներ ևս եղան:

Այս բաժնում օգտագործված ազդեցության գնահատման մեթոդոլոգիան քննարկվում է Գլուխ 4.3, և ավելի մանրամասնորեն ներկայացված է Հավելված 6.21.1-ում:

### **6.21.7 Հիմնական պայմաններ**

#### **Ազդեցության գոտիներ**

Ազդեցության ազգային գոտին ամբողջ Հայաստանն է: Ազդեցության շրջանային գոտին ընդգրկում է երկու մարզ, որով անցնում է հանքի տարածքը՝ Վայոց Ձորն ու Սյունիքը: Ազդեցության տեղական գոտին սահմանվում է այն վայրը, որտեղ շատ հավանական են բնապահպանական ու սոցիալական փոփոխությունները: Ազդեցության տեղական գոտին ծածկում է «Ծրագրի ազդակիր համայնքները», որոնք ամենամոտ ընկած համայնքներն են՝ Գորայք, Գնդեվազ ու Սարավան (ներառյալ Սարավանջն ու Ուղեձորը), Ջերմուկ քաղաքը (ներառյալ Կեչուտը), և սեզոնային անասնապահները՝ Ծրագրի տարածքում ամռան ամիսների ընթացքում:

Վայոց Ձորը կազմված է հետևյալ շրջաններից՝ Ջերմուկ, Եղեգնաձոր, Վայք, 4,346, 7,421 և 5,067 բնակչությամբ համապատասխանաբար (համաձայն 2011 Մարդահամարի). Սյունիքի մարզը ունի չորս շրջան՝ Կապան (34,713), Գորիս (17,881), Մեղրի (4,282) ու Միսին: (12,074). Ծրագրի վայրը տեղակայված է Ջերմուկի, Վայքի և Միսինի շրջաններում:

Ծրագրի ազդեցության տեղական գոտին հիմնականում գյուղական է, միայն Ջերմուկն է տարածքի քաղաքային կենտրոնը: Համաձայն 2011թ. մարդահամարի, Ջերմուկի բնակչությունը եղել է 4,346, իսկ հարևան Կեչուտ համայնքն ունեցել է 884 բնակիչ: Երկու համայնքներում էլ լրիվ դրույքով զբաղվածությունը տեղական բնակչության հիմնական եկամտի աղբյուրն է: Ամենամեծ գործատուներն են Ջերմուկի Ջրաշտակման գործարանը, հյուրանոցները և զբոսաշրջության հետ կապված այլ գործատուներ:

Զբոսաշրջության ոլորտը Ջերմուկ քաղաքի հիմնական տնտեսությունն է: 1940-ականներին Խորհրդային Միության կազմում հիմնադրվել է Ջերմուկ քաղաքը՝ շնորհիվ իր հանքային ջրերի, որպես զբոսաշրջային ուղղություն: Իր ծաղկունքի շրջանում՝ 1980-ականների վերջին, քաղաքն ուներ 10.000 բնակիչ: Այս թիվը մեծապես նվազել է Խորհրդային Միության փլուզումից հետո, իսկ 2001 թ. Մարդահամարի արդյունքում արձանագրվել է շուրջ 6,300 բնակչություն:

### **6.21.8 Առկա հյուրանոցային հանգույցները**

Աշխատողներին կացարանով ապահովելու տարբերակների ուսումնասիրության արդյունքում Ջերմուկում բացահայտվել է 15 հյուրանոց : Ուսումնասիրության թիմը այցելել է բոլոր հյուրանոցները և ստուգումներ անցկացրել տեղում: Թիմը տարբեր չափանիշներ է կիրառել (օրինակ՝ տեխնիկական, անվտանգության և սոցիալ-տնտեսական) դրանց համատապասխանությունը գնահատելու համար բնակեցնելու Ծրագրի աշխատուժին: Սոցիալ-տնտեսական չափանիշների առանցքային գործոնն է սակագները հյուրանոցներին բնորոշ ծանրաբեռնվածության ժամանակ զբոսաշրջային թեժ սեզոնին և առկա պայմանավորվածությունները տարբեր հաճախորդների հետ: Այսպիսով, հյուրանոցների հնարավոր օգտագործումը Ծրագրի կողմից այնպես է կազմակերպված, որ նվազեցնի ազդեցությունները Ջերմուկի զբոսաշրջային ավանդական բիզնեսի վրա:

Այցելված և ստուգված հյուրանոցներից մի քանիսը հաշվի չեն առնվի դրանց վերանորոգման վիճակից ելնելով/կամ լայնածավալ վերանորոգման կարիք կա (որոշ դեպքերում, վերանորոգումը ավարտին չի հասցվի ակնկալվող ժամկետում Ծրագրի շինարարական փուլի հատվածում): Չնայած Աշխատողներին կացարանով ապահովելու տարբերակների ուսումնասիրության թիմը բացահայտել է, որ Ջերմուկում հյուրանոցների ընդհանուր թողունակությունը 1306 քնատեղերի համար է (հիմնված կրկնակի զբաղվածության), սակայն թեժ սեզոնին Ծրագրի կողմից կօգտագործվի 397 քնատեղ, իսկ հանգիստ սեզոնին՝ 561:

### **6.21.9 Հնարավոր սոցիալական ազդեցությունները – Աշխատուժի բնակեցման տարբերակներ**

Մույն բաժնում ներկայացնում է հնարավոր սոցիալական ազդեցությունների գնահատումը՝ յուրաքանչյուր աշխատողի համար հաշվի առնված բնակեցման տարբերակները:

### **Դաշտային աշխատանքների ձեռնարկում**

Գործընթացների վերանայումից, հստակ կարգավորումներից, չափանիշների, ակնկալիքների ու լոգիստիկ ապահովման ավարտից հետո, Աշխատողներին

կացարանով ապահովելու տարբերակների ուսումնասիրության թիմը 2016թ. մարտին մեկնեց ուսումնասիրվող տարածք:

Դաշտային հետախուզումները իրականացվեցին 6 օրում՝ սիստեմատիկ այցելություններ կազմակերպելով յուրաքանչյուր հյուրանոցային համալիր: Այդ ժամանակահատվածում Աշխատողներին կացարանով ապահովելու տարբերակների ուսումնասիրության թիմը հիմնվել էր Ջերմուկում: Դաշտային աշխատանքների համար թիմը պետք է սովորաբար բաժանվեր երկու խմբի. մի խումբը պետք է այցելեր և ստուգեր հյուրանոցային հարմարությունները, իսկ մյուսը՝ հարցազրույցներ վարեր հյուրանոցների կառավարիչների և համայնքի ներկայացուցիչների հետ:

### **6.21.10 Աշխատուժի բնակեցման կազմակերպումները**

2016թ. ապրիլին Աշխատողներին կացարանով ապահովելու տարբերակների ուսումնասիրության թիմի կողմից իրականացված հետազոտության արդյունքում բացահայտվեցին աշխատուժի բնակեցման երկու հիմնական տարբերակներ՝

- Տարբերակ 1: դիտարկված հյուրանոցներից սոցիալապես ընդունելի տարբերակի կիրառում, 370 հյուրանոցային քնատեղ , 550 քնատեղ ճամբարում:
- Տարբերակ 2: Ջերմուկում և Արփայի հովտում առկա՝ 0 մինչև 370 հյուրանոցային քնատեղերի քանակը կհանգեցնի ճամբարում 550-920 մարդկանց կացարանային ապահովմանը :

Ճամբարում առավելագույնը 920 մարդու կացարանային ապահովումը հավասար է ոչ տեղացի աշխատուժի չափին, ինչը կպահանջվի և անհրաժեշտ կլինի, եթե ոչ մի հյուրանոց չօգտագործվի: Եթե թեժ սեզոնին առավելագույնը 370 հյուրանոցային քնատեղ կարող է օգտագործվել, 550 հոգանոց ճամբարն անհրաժեշտ կլինի Ծրագրի շինարարական փուլի ժամանակ:

Անհրաժեշտ է նշել, որ այս սցենարով կօգտագործվեն ընտրված հյուրանոցները, ինչը կպահանջվի դիտարկված նախնական ճամբարի կառուցումը: Այս սցենարում Ղեկավարությունը պետք է սահմանի անհրաժեշտ քնատեղերի քանակը Ծրագրի շինարարական փուլի ընթացքում: Կարևոր է նշել, որ վերը նշված երկու տարբերակներում էլ հյուրանոցների օգտագործումը նախատեսված է բնակեցման առավելագույն

պահանջարկի

դեպքում (մայիս, 2017) մոտավորապես 1,300 մարդկանցով: 2016թ աշնան սկզբին աշխատուժի հավաքագրման ժամանակ, պահանջներին համապատասխանելու համար ենթադրվում է, որ կօգտագործվեն առավելագույնը 370 – ից 561 հյուրանոցային քնատեղեր, քանի որ ճամբարի կառուցումը կավարտվի 2018թ. մարտին: Դրա անհրաժեշտությունը պայմանավորված է Ծրագրի կադրերի կտրուկ հավաքագրմամբ, ինչը կիրառելի է ներկայացված տարբերակներից յուրաքանչյուրի հետ:

### **Ազդեցության գնահատում**

Կացարանային ապահովման տարբերակների արդյունքում առաջացած հնարավոր սոցիալական ազդեցությունները բացահայտվել են սոցիալ-տնտեսական



միջավայրի մասին իրազեկ լինելու և Ծրագրի առաջարկված գործունեության, ինչպես նաև դաշտային աշխատանքների շնորհիվ, այսինքն՝ Ծրագրի ազդեցությունների ընկալումը հյուրանոցների սեփականատերերի ու համայնքի ներկայացուցիչների հետ իրականացված հարցազրույցների ժամանակ բացահայտված ներդրման շնորհիվ (օրինակ ՀԿԿի անդամներ, Ջերմուկի քաղաքապետ և քաշաքացիական հասարակության ներկայացուցիչներ): Յուրաքանչյուր ազդեցություն գնահատվել է՝ համաձայն որոշված չափանիշների, որպեսզի որոշվի դրանց հնարավոր նշանակությունը:

Ամփոփելով միջոցառումների արդյունավետ իրականացումը՝ խուսափելու, նվազեցնելու, կանխելու կամ փոխհատուցելու ցանկացած բացասական ազդեցություն, ինչպես նաև բարելավվելու ցանկացած դրական ազդեցություն, յուրաքանչյուր ազդեցությունը կվերագնահատվի՝ օգտագործելով նույն գնահատման չափանիշները, որոշելու մեղմացման միջոցառումներին հետևած մնացորդային ազդեցությունների նշանակությունը:

Սոցիալական Ազդեցության Գնահատման Մեթոդաբանության վերաբերյալ մանրամասները ներկայացված են Հավելված 6.21.1.

Ինչպես արդեն նշվել էր, հնարավոր է կիրառվի աշխատուժի բնակեցման հիբրիդային ձևը: Այսպիսով ենթադրվում է, որ կացարանային ապահովման երկու բաղադրիչներից (հյուրանոցներ և ճամբարներ) բխող ազդեցությունները կնյութականացվեն հիբրիդի դեպքում: Աշխատուժի կացարանային ապահովման հետևանքով ակնկալվող սոցիալական ազդեցությունները, ինչպես նաև դրանց հնարավոր նշանակությունը մեղմացման միջոցառումներից առաջ և հետո, ընդունվել են և ներկայացված են ստորև Աղյուսակ 3 և 4-ում:

| Error! No text of specified style in document..2 Ազդեցությունների համառոտագրում մինչ մեղմացումն ու մեղմացումից հետո՝ Հյուրանոցներ <sup>78</sup> |                |  |   |  |  |
|---|----------------|--|---|--|--|
| Սոցիալ-տնտեսական ազդեցություն   | Ծրագրի փուլ    | Ազդեցության նկարագրություն   | Ուժգնության դասակարգում մինչ մեղմացումը | Մեղմացման միջոցառումներ (Առաջարկվող)                       | Ուժգնության դասակարգում մեղմացումից հետո |
| Ծրագրի շրջանակներում աշխատողների  | Շինարարություն | Ծրագրի շինարարություն փուլի աշխատողները հավանաբար կզբաղեցնեն Ջերմուկ քաղաքի հյուրանոցային սենյակների զգալի մասը՝ | Միջին բացասական                         | Առաջարկվում է հյուրանոցներն օգտագործել ընտրողաբար և Ծրագրի | Քիչ բացասական                            |
|   | Շահագործում    |  | Աննշան                                  |  | Աննշան                                   |

<sup>7</sup> Սպասվում է Ծրագրի շահագործման փուլի ընթացքում հյուրանոցների օգտագործման կրճատում:

<sup>8</sup> Մույն աղյուսակն արտացոլում է Ծրագրի շրջանակներում աշխատուժի տեղակայման համար հյուրանոցների օգտագործման ազդեցությունները



| Error! No text of specified style in document..2 Ազդեցությունների համառոտագրում մինչ մեղմացումն ու մեղմացումից հետո՝ Հյուրանոցներ <sup>78</sup> |             |   |   |  |  |
|---|-------------|---|---|--|--|
| Սոցիալ-տնտեսական ազդեցություն   | Ծրագրի փուլ | Ազդեցության նկարագրություն  | Ուժգնության դասակարգում մինչ մեղմացումը | Մեղմացման միջոցառումներ (Առաջարկվող)   | Ուժգնության դասակարգում մեղմացումից հետո |
| Ժամանակավոր ներհոսք (հյուրանոցային տեղերի զգալի զբաղեցմամբ)՝ ավանդական զբոսաշրջության և վրաբացասական ազդեցության հնարավորությամբ                | Փակում      | ակտիվ զբոսաշրջային սեզոնների ընթացքում սահմանափակելով «ավանդական» այցելուների տեղակայման հնարավորությունները: Չնայած որ այն ենթադրում է բացասական ազդեցություն զբոսաշրջության և հյուրանոցային բնագավառների մասով, այն հիմնականում սահմանափակվում է ակտիվ զբոսաշրջային սեզոնով (հունիսից մինչև սեպտեմբերն ու հունվարի սկիզբը Ջերմուկի պարագայում, մայիսից-հոկտեմբեր՝ մնացած վայրերում), երբ հյուրանոցներն աշխատում են գրեթե լիարժեք զբաղվածությամբ, և Ծրագիրը կարող է «մրցակցային» իրավիճակ ստեղծել հյուրանոցային համարների առկայության մասով: | Առկա չէ                                 | կողմից զբաղվածության որոշակի սահմանափակմամբ՝ մասնավորապես զբոսաշրջային ակտիվ սեզոնների ընթացքում:<br><br>Մասնավորապես, նախատեսվում է օգտագործել երկու խոշոր հյուրանոց (Մոսկվա և Ջերմուկ աշխարհ) մոտ 250 մարդ տեղավորելու, ինչպես նաև մի քանի այլ փոքր հյուրանոցներ՝ մոտ 120 հոգի բնակեցնելու համար: Ինչը նշանակում է, որ բոլոր հյուրանոցների այս կամ այն չափով հասանելի կլինի այլ այցելուների համար: | Առկա չէ                                  |
| ZT520088<br>Մայիս 2016  |             | Տարբերակ 10   |   |  |  |

| Error! No text of specified style in document..2 Ազդեցությունների համառոտագրում մինչ մեղմացումն ու մեղմացումից հետո՝ Հյուրանոցներ <sup>78</sup> |                |  |   |  |  |
|---|----------------|--|---|--|--|
| Սոցիալ-տնտեսական ազդեցություն   | Ծրագրի փուլ    | Ազդեցության նկարագրություն   | Ուժգնության դասակարգում մինչ մեղմացումը | Մեղմացման միջոցառումներ (Առաջարկվող)   | Ուժգնության դասակարգում մեղմացումից հետո |
| Այցելուների մոտ Ջերմուկի որպես “հանգստյան քաղաքի” ընկալման փոփոխություն՝ ավանդական զբոսաշրջության վրա բացասական ազդեցությամբ                    | Շինարարություն | Ջերմուկում Ծրագրի աշխատուժի զգալի ներկայությունը (ի հավելումն մոտակայքում գտնվող հանքի ֆիզիկական առկայության) կարող է ազդել առողջարանային քաղաք համարվող քաղաքի համբավի վրա, ինչպես նաև զբոսաշրջիկների համապատասխան ընկալման վրա, որը որպես կանոն ասոցիացվում է մաքուր օդի, անաղմուկ միջավայրի և սպա/բժշկական բուժումների հետ: Չնայած որ ընկալման նման փոփոխությունը համարվում է որակական բնույթի ազդեցություն, այնուամենայնիվ այն կարող է միջնաժամկետից երկարաժամկետ կտրվածքով բերել մեկ այլ, ավելի զգալի հետևանքների, որոնցից է՝ այցելուների թվի նվազումն է: | Շատ բացասական                           | Նվազեցնել Ջերմուկի հյուրանոցներում բնակեցվող աշխատողների թիվը: Աջակցել զբոսաշրջության զարգացման միջոցառումներին: Պարտադրել Վարքականոնների կիրառումը: | Միջին բացասական                          |
|   | Շահագործում    |  | Միջին բացասական                         |  | Քիչ բացասական                            |
|   | Փակում         |  | Աննշան                                  |  | Աննշան                                   |
| Տեղացի բնակչության  | Շինարարություն | Շինարարական աշխատուժի ներկայությունը (և մոտակայքում գտնվող   | Միջին բացասական                         | Հաճախակի և ակտիվ հաղորդակցում  | Քիչ բացասական                            |



| Error! No text of specified style in document..2 Ազդեցությունների համառոտագրում մինչ մեղմացումն ու մեղմացումից հետո՝ Հյուրանոցներ <sup>78</sup> |                |   |   |   |  |
|---|----------------|---|---|---|--|
| Սոցիալ-տնտեսական ազդեցություն   | Ծրագրի փուլ    | Ազդեցության նկարագրություն  | Ուժգնության դասակարգում մինչ մեղմացումը | Մեղմացման միջոցառումներ (Առաջարկվող)  | Ուժգնության դասակարգում մեղմացումից հետո |
| մոտ սեփական համայնքի ընկալման փոփոխություն (մթնոլորտ)   | Շահագործում    | հանքի առկայությունը) կարող են ազդել տեղացի բնակիչների կողմից սեփական համայնքի ընկալման վրա, ինչը ներառում է ինչպես մթնոլորտի, այնպես էլ անվտանգության ընկալումը: Սա դիտարկվում է որպես որակական ազդեցություն և կարող է ունենալ որոշ դրական կողմեր, եթե տեղացի բնակիչները կապեն հանքարդյունաբերական ծրագրի առկայությունը տեղացիների զբաղվածության ավելացման և լրացուցիչ հնարավորությունների հետ: | Քիչ բացասական                           | տեղական համայնքների շահագրգիռ կողմերի հետ:<br><br>Վարքականոնների կիրառման պարտադրում: | Աննշան                                   |
|   | Փակում         |   | առկա չէ                                 |   | առկա չէ                                  |
| Համայնքային ենթակառուցվածքների և օբյեկտների վրա ճնշման ավելացում  | Շինարարություն | Ծրագրի աշխատուժի բնակեցումը հյուրանոցներում ակտիվ զբոսաշրջային սեզոնների ընթացքում չի ունենա զգալի ազդեցություն քաղաքային ենթակառուցվածքների և ծառայությունների մասով, քանի որ որպես կանոն դրանց մեծ մասը   | Միջին բացասական                         | Ավելացնել տեղական հիվանդանոցի հնարավորությունները:                                    | Քիչ դրական                               |
|   | Շահագործում    |   | Քիչ բացասական                           | Բարելավել քաղաքային աղբավայրերը:  | Քիչ դրական                               |

| Error! No text of specified style in document..2 Ազդեցությունների համառոտագրում մինչ մեղմացումն ու մեղմացումից հետո՝ Հյուրանոցներ <sup>78</sup> |             |   |   |   |  |
|---|-------------|---|---|---|--|
| Սոցիալ-տնտեսական ազդեցություն   | Ծրագրի փուլ | Ազդեցության նկարագրություն  | Ուժգնության դասակարգում մինչ մեղմացումը | Մեղմացման միջոցառումներ (Առաջարկվող)  | Ուժգնության դասակարգում մեղմացումից հետո |
|   | Փակում      | աշխատում է ամբողջական կամ գրեթե ամբողջական զբաղվածությամբ (և քաղաքապետարանը պատրաստ է նման զարգացմանը): Միննույն ժամանակ, պասիվ զբոսաշրջային սեզոնների ընթացքում քաղաքապետարանը ստիպված կլինի ավելացնել աշխատողների թիվը՝ ծառայությունների պահանջարկը բավարարելու նպատակով (ինչը պայմանավորված է հյուրանոցներում Ծրագրային աշխատողների ներկայությամբ), ինչպես նաև անհրաժեշտ կլինի ավելացնել հյուրանոցային օպերատորներից կատարվող աղբահեռացման գանձումները: Անհրաժեշտություն կառաջանա ավելացնել ձյունահեռացման միջոցներն ու փողոցային լուսավորությունը: Ինչը ենթադրում է ծախսերի ավելացում Ջերմուկի քաղաքապետարանի համար, ինչն էլ իր հերթին կարող է հատուցվել հյուրանոցներից (որոնք արդեն օգտվում են պասիվ սեզոնների համար ոչ բնորոշ հյուրանոցային ակտիվ զբաղվածությունից) կամ հենց Ծրագրից կատարվող գանձումներով: Քաղաքապետարանի կողմից լրացուցիչ | առկա չէ                                 | Համակարգել աշխատանքները (և ըստ անհրաժեշտության աջակցել) քաղաքապետարանի հետ: | առկա չէ                                  |
| ZT520088<br>Մայիս 2016  |             | Տարբերակ 10<br>են պասիվ սեզոնների համար ոչ բնորոշ հյուրանոցային ակտիվ զբաղվածությունից) կամ հենց Ծրագրից կատարվող գանձումներով:<br>Քաղաքապետարանի կողմից լրացուցիչ  | էջ 22                                   |   |  |

| Error! No text of specified style in document..2 Ազդեցությունների համառոտագրում մինչ մեղմացումն ու մեղմացումից հետո՝ Հյուրանոցներ <sup>78</sup> |                |  |   |                                      |  |
|---|----------------|--|---|--------------------------------------|--|
| Սոցիալ-տնտեսական ազդեցություն   | Ծրագրի փուլ    | Ազդեցության նկարագրություն   | Ուժգնության դասակարգում մինչ մեղմացումը | Մեղմացման միջոցառումներ (Առաջարկվող) | Ուժգնության դասակարգում մեղմացումից հետո |
| Տեղական բնակչության   | Շինարարություն | Ակտիվ զբոսաշրջային սեզոնի ընթացքում Ծրագրի աշխատողների բնակեցումը հյուրանոցներում չի | Միջին դրական                            | առկա չէ                              | Միջին դրական                             |
|   | Շահագործում    |  | Աննշան                                  |                                      | Աննշան                                   |

| Error! No text of specified style in document..2 Ազդեցությունների համառոտագրում մինչ մեղմացումն ու մեղմացումից հետո՝ Հյուրանոցներ <sup>78</sup> |             |   |   |                                      |  |
|---|-------------|---|---|--------------------------------------|--|
| Սոցիալ-տնտեսական ազդեցություն   | Ծրագրի փուլ | Ազդեցության նկարագրություն  | Ուժգնության դասակարգում մինչ մեղմացումը | Մեղմացման միջոցառումներ (Առաջարկվող) | Ուժգնության դասակարգում մեղմացումից հետո |
| զբաղվածության և ավելացում (ուղղակի և անուղղակի)   | Փակում      | հանգեցնի նոր կամ լրացուցիչ զբաղվածության, քանի որ հյուրանոցները որպես կանոն տվյալ ամիսների ընթացքում (հունիսից մինչև սեպտեմբեր և հունվարի սկզբին) աշխատում են ամբողջական կամ գրեթե ամբողջական հզորությամբ: Մինևույն ժամանակ, շինարարության փուլի աշխատողների բնակեցումը հյուրանոցներում կնպաստի քաղաքում որոշ աշխատողների (ինչպես ուղղակիորեն հյուրանոցներում աշխատող, այնպես էլ ծառայությունների մատակարարման ոլորտում ընգրկված աշխատողների) շուրջտարյա զբաղվածությանը: Մա դրական ազդեցություն է, չնայած որ շինարարության փուլի տևողությամբ պայմանավորված կրում է ժամանակավոր և սեզանային բնույթ (ինչը նկատելի է հիմնականում պասիվ զբոսաշրջային սեզոններին): | առկա չէ                                 |                                      | առկա չէ                                  |





| Error! No text of specified style in document..2 Ազդեցությունների համառոտագրում մինչ մեղմացումն ու մեղմացումից հետո՝ Հյուրանոցներ <sup>78</sup> |                |  |   |   |  |
|---|----------------|--|---|---|--|
| Սոցիալ-տնտեսական ազդեցություն   | Ծրագրի փուլ    | Ազդեցության նկարագրություն   | Ուժգնության դասակարգում մինչ մեղմացումը | Մեղմացման միջոցառումներ (Առաջարկվող)  | Ուժգնության դասակարգում մեղմացումից հետո |
| Տեղական գնումների ավելացում (Ապրանքներ ու ծառայություններ)  | Շինարարություն | Պասիվ զբոսաշրջային սեզոնի ընթացքում կարող է նկատվել տեղական ապրանքների ու ծառայությունների գնումների ծավալների աճ (ի տարբերություն ակտիվ զբոսաշրջային սեզոնի), եթե հյուրանոցների մատակարարման շղթան սովորական պայմաններում ներառում է զգալի թվով տեղական բիզնեսներ: Այնուամենայնիվ, հյուրանոցներում բանվորների տեղակայմամբ պայմանավորված դրական ազդեցությունը տեղական գնումների մասով հնարավոր է ավելացնել, եթե Ծրագրի շրջանակներում (որպես հյուրանոցների հետ պայմանագրային պայմանավորվածության մաս) ներկայացվի տեղական բիզնեսներից կատարվող գնումների ավելացման պահանջ: | Քիչ դրական                              | Ծրագրային կապալառուների պայմանագրերում ներառել տեղական գնումների վերաբերյալ դրույթ:<br><br>Իրականացնել մատակարարների զարգացման ծրագրեր: | Միջին դրական                             |
|   | Շահագործում    |  | Աննշան                                  |   | Աննշան                                   |
|   | Փակում         |  | առկա չէ                                 |   | առկա չէ                                  |
|   | Շինարարություն | Շուրջտարյա զբաղվածության ավելացումը որոշ հյուրանոցային   | Միջին դրական                            | առկա չէ   | Միջին դրական                             |

| Error! No text of specified style in document..2 Ազդեցությունների համառոտագրում մինչ մեղմացումն ու մեղմացումից հետո՝ Հյուրանոցներ <sup>78</sup> |             |   |   |                                      |  |
|---|-------------|---|---|--------------------------------------|--|
| Սոցիալ-տնտեսական ազդեցություն   | Ծրագրի փուլ | Ազդեցության նկարագրություն  | Ուժգնության դասակարգում մինչ մեղմացումը | Մեղմացման միջոցառումներ (Առաջարկվող) | Ուժգնության դասակարգում մեղմացումից հետո |
| Տեղացի աշխատուժի հմտությունների զարգացում (և փորձառություն )  | Շահագործում | աշխատողների և այլոց համար ենթադրում է պրակտիկ գործունեության ընթացքում հմտությունների զարգացման հնարավորություն: Ձեռքբերված հմտություններն ու փորձառությունը դարձնում են այդ աշխատողներին ավելի մրցունակ հետագա զբաղվածության առումով: Շինարարության փուլի ընթացքում որոշ թվով արտասահմանցի մասնագետների բնակեցումը հյուրանոցներում մեծ հնարավորություններ է ընձեռնում հյուրանոցային աշխատողների համար օտար լեզվի մասնագիտացման առումով, ինչը հանդիսանում է հյուրանոցներում և հյուրանոցային բիզնեսում աշխատանք գտնելու հիմնական պահանջը: Այս ազդեցությունը համարվում է դրական, չնայած որ այն կարճաժամկետ է լինելու (հիմնականում շինարարության փուլում): | Քիչ դրական                              |                                      | Քիչ դրական                               |
|   | Փակում      |   | առկա չէ                                 |                                      | առկա չէ                                  |

| Error! No text of specified style in document..2 Ազդեցությունների համառոտագրում մինչ մեղմացումն ու մեղմացումից հետո՝ Հյուրանոցներ <sup>78</sup> |                |                            |   |  |  |
|---|----------------|----------------------------|---|--|--|
| Սոցիալ-տնտեսական ազդեցություն   | Ծրագրի փուլ    | Ազդեցության նկարագրություն | Ուժգնության դասակարգում մինչ մեղմացումը | Մեղմացման միջոցառումներ (Առաջարկվող)                 | Ուժգնության դասակարգում մեղմացումից հետո |
| Անբարենպաստ ազդեցություններ   | Շինարարություն |                            | Շատ բացասական                           | Իրականացնել իրազեկման ծրագրեր (օրինակ՝ սեռավարակների | Միջին բացասական                          |
|   | Շահագործում    |                            | Քիչ բացասական                           |  | Աննշան                                   |



| Error! No text of specified style in document..2 Ազդեցությունների համառոտագրում մինչ մեղմացումն ու մեղմացումից հետո՝ Հյուրանոցներ <sup>78</sup> |             |   |   |   |  |
|---|-------------|---|---|---|--|
| Սոցիալ-տնտեսական ազդեցություն   | Ծրագրի փուլ | Ազդեցության նկարագրություն  | Ուժգնության դասակարգում մինչ մեղմացումը | Մեղմացման միջոցառումներ (Առաջարկվող)  | Ուժգնության դասակարգում մեղմացումից հետո |
| համայնքների առողջապահության, անվտանգության և ապահովության մասով   | Փակում      | Ջերմուկի համայնքի տարածքում շինարարական աշխատուժի բնակեցումը հյուրանոցներում կարող է ունենալ բացասական ազդեցություն համայնքային առողջապահության, անվտանգության և ապահովության մասով: Շինարարական աշխատուժի ներհոսքը ենթադրում է տարափոխիկ հիվանդությունների (օրինակ՝ սեռավարակների, հարբուխի և այլնի) թվի ավելացում: Մեծաթիվ աշխատողների փոխադրումը շինհրապարակից դեպի իրենց բնակեցման վայրերը ենթադրում է երթևեկության ակտիվացում և մեծաքանակ մեքենաների առկայություն համայնքի տարածքում, ինչը կարող է հանգեցնել ավտոպատահարների ավելացմանը և/կամ օդի որակի փոփոխմանը: | առկա չէ                                 | վերաբերյալ)<br><br>Առաջարկել կոնֆիդենցիալ ստուգումներ սեռավարակների և այլ վարակիչ հիվանդությունների հայտնաբերման նպատակով:<br><br>Ավելացնել տեղական առողջապահական ծառայությունների հնարավորությունները:<br><br>Հնարավորինս նվազեցնել աշխատողների և համայնքի միջև փոխհարաբերությունները (Վարքականոնների կիրառմամբ) | առկա չէ                                  |
| ZT520088<br>Մայիս 2016  |             | Տարբերակ 10   |   | Իրականացնել երթևեկության անվտանգության/վերահսկման միջոցառումներ:  |  |

| Error! No text of specified style in document..2 Ազդեցությունների համառոտագրում մինչ մեղմացումն ու մեղմացումից հետո՝ Հյուրանոցներ <sup>78</sup> |                |  |   |  |  |
|---|----------------|--|---|--|--|
| Սոցիալ-տնտեսական ազդեցություն   | Ծրագրի փուլ    | Ազդեցության նկարագրություն   | Ուժգնության դասակարգում մինչ մեղմացումը | Մեղմացման միջոցառումներ (Առաջարկվող)   | Ուժգնության դասակարգում մեղմացումից հետո |
| Համայնքների և Ծրագրի աշխատողների միջև բախումների հավանականություն   | Ծինարարություն | Տեղական համայնքի և շինարարական փուլի աշխատողների միջև բախումների հավանականությունը կավելանա, եթե աշխատողները բնակեցվեն համայնքի տարածքում գտնվող հյուրանոցներում և նրանց միջև փոխներգործությունը չնվազեցվի հնարավորության սահմաններում:<br>Չնայած որ Ջերմուկի պես համայնքների բնակիչները սովոր են այցելություններին, սակայն առկա է բախումների առաջացման մտավախություն, քանի որ տեղացի բնակիչները դժգոհությամբ կընդունեն այն փաստը, որ մասնագիտացում չպահանջող աշխատատեղերը առաջարկվել են դրսի բանվորներին առանց հաշվի առնելու տեղացիներին: | Շատ բացասական                           | Առավելագույնին հասցնել տեղացիների զբաղվածությունը՝ օգտվելով տեղական աշխատողների տվյալների բազաներից և իրականացնելով վերապատրաստման ծրագրեր:<br><br>Հնարավորինս նվազեցնել աշխատողների և համայնքի միջև փոխհարաբերությունները (Վարքականոնների կիրառմամբ): | Քիչ բացասական                            |
|   | Շահագործում    |  | առկա չէ                                 |  | Աննշան                                   |
|   | Փակում         |  | առկա չէ                                 |  |  |
| Համայնք-Ծրագրի փոխհարաբերո  | Ծինարարություն | Համայնքի և Ծրագրի միջև լարվածությունը կարող է ավելանալ միայն այն ենթադրությունից, որ   | Շատ բացասական                           | Հաճախակի և ակտիվ փոխգործություն տեղական համայնքների  | Քիչ բացասական                            |
|   | Շահագործում    |  | առկա չէ                                 |  | առկա չէ                                  |

| Error! No text of specified style in document..2 Ազդեցությունների համառոտագրում մինչ մեղմացումն ու մեղմացումից հետո՝ Հյուրանոցներ <sup>78</sup> |                |  |   |  |  |
|---|----------------|--|---|--|--|
| Սոցիալ-տնտեսական ազդեցություն   | Ծրագրի փուլ    | Ազդեցության նկարագրություն   | Ուժգնության դասակարգում մինչ մեղմացումը | Մեղմացման միջոցառումներ (Առաջարկվող)   | Ուժգնության դասակարգում մեղմացումից հետո |
| Լթյուններում լարվածությունների հնարավորություն  | Փակում         | շինարարական աշխատուժի տեղակայումը համայնքի հյուրանոցներում պատշաճորեն չի վերահսկվում և/կամ բերում է համայնքի համար վնասական հետևանքների: Հնարավոր բացասական ազդեցություն է համարվում Ծրագրի, ընթացիկ փոխգործության և համագործակցության մակարդակի ընկալման վատթարացումը: Վատագույն դեպքում Ծրագրի և հյուրընկալող համայնքների միջև վատ հարաբերությունները կարող են հանգեցնել ծրագրային գործողությունների խոչընդոտման և/կամ սոցիալական արտոնագրի կորստին կամ անգամ Ծրագրի դադարեցման: | առկա չէ                                 | շահագրգիռ կողմերի հետ՝ Ծրագրային գործողությունների վերաբերյալ պարբերական իրազեկմամբ: | առկա չէ                                  |
| Տեղական հյուրանոցների եկամուտների   | Շինարարություն | Ծրագրային աշխատողների բնակեցումը համայնքում գտնվող հյուրանոցներում, գոնե շինարարության փուլի ընթացքում   | Միջին դրական                            | առկա չէ  | Միջին դրական                             |
|   | Շահագործում    |  | Քիչ դրական                              |  | Քիչ դրական                               |

| Error! No text of specified style in document..2 Ազդեցությունների համառոտագրում մինչ մեղմացումն ու մեղմացումից հետո՝ Հյուրանոցներ <sup>78</sup> |                |  |   |   |  |
|---|----------------|--|---|---|--|
| Սոցիալ-տնտեսական ազդեցություն   | Ծրագրի փուլ    | Ազդեցության նկարագրություն   | Ուժգնության դասակարգում մինչ մեղմացումը | Մեղմացման միջոցառումներ (Առաջարկվող)  | Ուժգնության դասակարգում մեղմացումից հետո |
| ավելացում   | Փակում         | (կարճաժամկետ), կհանգեցնի հյուրանոցների եկամուտների կայուն և ավելացող աճին: Ծրագրի և հյուրանոցների միջև պայմանավորվածությունը ենթադրում է հյուրանոցների երաշխավորված ամբողջական զբաղեցում ակտիվ զբոսաշրջային սեզոնի ընթացքում և սովորականից բարձր զբաղվածություն պասիվ սեզոնների ընթացքում: Հետևաբար եկամուտների բաշխումը տարեկան կտրվածքով կլինի ավելի հավասարաչափ: Ընդհանուր ազդեցությունը գնահատվում է որպես շատ դրական, չնայած որ կարճաժամկետ (հավանաբար սահմանափակված շինարարության փուլով): | առկա չէ                                 |   | առկա չէ                                  |
| Շինարարության ամենաակտիվ փուլին   | Շինարարություն | Հյուրանոցների բարձր կամ գրեթե ամբողջական զբաղվածությունը ենթադրում է կարճաժամկետ օգուտ հյուրանոցային տերերի համար: Սակայն  | Միջին բացասական                         | Հաղորդակից դարձնել Ծրագրի պլանների և շինարարության փուլի ավարտման ենթադրյալ | Քիչ բացասական                            |
|   | Շահագործում    |  | Քիչ բացասական                           |   | Աննշան                                   |

| Error! No text of specified style in document..2 Ազդեցությունների համառոտագրում մինչ մեղմացումն ու մեղմացումից հետո՝ Հյուրանոցներ <sup>78</sup> |                |   |   |   |  |
|---|----------------|---|---|---|--|
| Սոցիալ-տնտեսական ազդեցություն   | Ծրագրի փուլ    | Ազդեցության նկարագրություն  | Ուժգնության դասակարգում մինչ մեղմացումը | Մեղմացման միջոցառումներ (Առաջարկվող)  | Ուժգնության դասակարգում մեղմացումից հետո |
| հաջորդող հաճախորդների կորուստ որոշ հյուրանոցների համար  | Փակում         | “ավանդական” հաճախորդներից որոշներին (օրինակ՝ տուրիստական ընկերություններին, որոնց հետ ունեն երկարաժամկետ պայմանագրեր) սպասարկելու հյուրանոցների անկարողությունը կարող է հանգեցնել բիզնեսի կորստին, եթե ձևավորվի Ծրագրային աշխատողների ներկայությամբ պայմանավորված հյուրանոցների մշտական զբաղվածության կարծիք: | առկա չէ                                 | ամսաթվերի մասին: Հյուրանոցների ընտրովի (և սահմանափակ) օգտագործում: Աջակցել տուրիզմի զարգացման երկարաժամկետ ռազմավարությունների և պլանների մշակմանը: | առկա չէ                                  |
| Ծառայությունների ու ապրանքների որոշ   | Շինարարություն | Զբոսաշրջային ուղղվածությամբ միջոցառումները, ինչպիսիք են՝ դրսի տուրերի կազմակերպումը, տեղական ապրանքների, հուշանվերների և  | Միջին բացասական                         | Տեղացի գործարարների համար կազմակերպել բիզնես դասընթացներ:   | Քիչ բացասական                            |
|   | Շահագործում    |   | Քիչ բացասական                           |   | Աննշան                                   |



| Error! No text of specified style in document..2 Ազդեցությունների համառոտագրում մինչ մեղմացումն ու մեղմացումից հետո՝ Հյուրանոցներ <sup>78</sup> |             |   |   |  |  |
|---|-------------|---|---|--|--|
| Սոցիալ-տնտեսական ազդեցություն   | Ծրագրի փուլ | Ազդեցության նկարագրություն  | Ուժգնության դասակարգում մինչ մեղմացումը | Մեղմացման միջոցառումներ (Առաջարկվող)   | Ուժգնության դասակարգում մեղմացումից հետո |
| մատակարարների համար առևտրի կրճատում   | Փակում      | արվեստի գործերի վաճառքն ու ռեստորանային գործունեությունը կարող են բախել բիզնեսի նվազման խնդրին ակտիվ զբոսաշրջային սեզոնի ընթացքում, ինչը պայմանավորված է աշխատողների, այլ ոչ զբոսաշրջիկների կողմից հյուրանոցային սենյակների մեծամասնության զբաղվածությամբ և քանի որ աշխատողների նմանատիպ ծախսերը հավանաբար սահմանափակ կլինեն:<br>Մա դիտարկվում է որպես բացասական ազդեցություն տեղական բիզնեսների համար: | Քիչ բացասական                           | Իրականացնել մատակարարների զարգացման ծրագրեր:<br><br>Աջակցել տեղական բիզնեսների գովազդային և խթանման միջոցառումներին (օր՝ տեղական փառատոններ և միջոցառումներ) | Աննշան                                   |

**Աղյուսակ Error! No text of specified style in document..3. Ազդեցությունների համառոտագրում մինչ մեղմացումն ու մեղմացումից հետո՝ Աշխատողների ճամբար<sup>9</sup>**

| Սոցիալ-տնտեսական ազդեցություն  | Ծրագրի փուլ    | Ազդեցության նկարագրություն  | Ուժգնության դասակարգում մինչ մեղմացումը | Մեղմացման միջոցառումներ (Առաջարկվող)                                  | Ուժգնության դասակարգում մեղմացումից հետո |
|--|----------------|---|---|---|--|
| Այցելուների մոտ Ջերմուկի որպես “հանգստյան քաղաքի” ընկալման փոփոխություն՝ ավանդական զբոսաշրջության վրա բացասական ազդեցությամբ | Շինարարություն | Ջերմուկում Ծրագրի շինարարական աշխատուժի ներկայությունը (ի հավելումն մոտակայքում գտնվող հանքի ֆիզիկական առկայության) կարող է ազդել հանգստավայր համարվող քաղաքի համբավի վրա, ինչպես նաև զբոսաշրջիկների համապատասխան ընկալման վրա, որը որպես կանոն ասոցիացվում է մաքուր օդի, անաղմուկ միջավայրի և սպա/բժշկական բուժումների հետ:<br>Ենթադրվում է, որ Ծրագրի աշխատողների համար նախատեսված շինարարական ճամբարը կարող է սահմանափակել Ջերմուկ քաղաքի համբավի սպասվող փոփոխության մեծությունը: | Միջին բացասական                         | Նվազեցնել Ծրագրային մեքենաների և աշխատուժի ներկայությունը Ջերմուկում: | Քիչ բացասական                            |
|  | Շահագործում    |   | Քիչ բացասական                           | Աննշան  | Աննշան                                   |
|  | Փակում         |   | Աննշան                                  | Աջակցել տուրիզմի զարգացմանը:<br>Հարկադրել Վարքականոնների կիրառումը:   | Աննշան                                   |
| Տեղացի բնակչության   | Շինարարություն | Շինարարական աշխատուժի ներկայությունը կարող է ազդել տեղացի   | Քիչ բացասական                           | Հաճախակի և ակտիվ հաղորդակցում տեղական                                 | Աննշան                                   |

<sup>9</sup> This table is focused on the impacts of constructing and operating a camp to house the Project’s workforce.



| Աղյուսակ Error! No text of specified style in document..3. Ազդեցությունների համառոտագրում մինչ մեղմացումն ու մեղմացումից հետո Աշխատողների ճամբար 9 |                |  |   |  |  |
|--|----------------|--|---|--|--|
| Սոցիալ-տնտեսական ազդեցություն  | Ծրագրի փուլ    | Ազդեցության նկարագրություն   | Ուժգնության դասակարգում մինչ մեղմացումը | Մեղմացման միջոցառումներ (Առաջարկվող)   | Ուժգնության դասակարգում մեղմացումից հետո |
| մոտ սեփական համայնքի ընկալման փոփոխություն (մթնոլորտ և համայնքի անվտանգություն)  | Շահագործում    | բնակիչների կողմից սեփական համայնքի ընկալման վրա, ինչը ներառում է ինչպես մթնոլորտի, այնպես էլ անվտանգության ընկալումը: Սա դիտարկվում է որպես որակական ազդեցություն և կարող է ունենալ որոշ դրական կողմեր, եթե տեղացի բնակիչները կապեն հանքարդյունաբերական ծրագրի առկայությունը տեղացիների զբաղվածության ավելացման և լրացուցիչ հնարավորությունների հետ: | Աննշան                                  | համայնքների շահագրգիռ կողմերի հետ:<br><br>Վարքականոնների կիրառման պարտադրում:  | Աննշան                                   |
|  | Փակում         |  | Աննշան                                  |  | Աննշան                                   |
| Համայնքային ենթակառուցվածքների և օբյեկտների վրա ճնշման ավելացում   | Շինարարություն | Ծրագրի աշխատուժի բնակեցումը փակ ճամբարներում չի ունենա զգալի ազդեցություն քաղաքային ենթակառուցվածքների և ծառայությունների մասով: Միևնույն ժամանակ Ծրագրի աշխատուժը կարող է օգտվել Ջերմուկի հիվանդանոցի   | Քիչ բացասական                           | Ավելացնել տեղական հիվանդանոցի հզորությունը:<br><br>Համակարգել (ինչպես նաև անհրաժեշտության դեպքում աջակցել) տեղական հիվանդանոցին: | Քիչ դրական                               |
|  | Շահագործում    |  | Քիչ բացասական-                          |  | Քիչ դրական                               |



**Աղյուսակ Error! No text of specified style in document..3. Ազդեցությունների համառոտագրում մինչ մեղմացումն ու մեղմացումից հետո՝ Աշխատողների ճամբար՝**

| Սոցիալ-տնտեսական ազդեցություն | Ծրագրի փուլ | Ազդեցության նկարագրություն   | Ուժգնության դասակարգում մինչ մեղմացումը | Մեղմացման միջոցառումներ (Առաջարկվող) | Ուժգնության դասակարգում մեղմացումից հետո |
|-------------------------------|-------------|--|---|--------------------------------------|--|
|                               | Փակում      | <p>բժշկական ծառայություններից՝ այսպիսով ավելացնելով տեղական բժշկական հաստատությունների ծառայությունների պահանջարկը (հիվանդությունների ավելացման հետ կապված):</p> <p>Համայնքում առողջապահական ծառայությունների տրամադրումը նույնպես կարող է կրել չափավոր ազդեցություն, եթե կոնկրետ ժամանակահատվածներում Ջերմուկի հիվանդանոցը գերձանրաբեռնված լինի հիվանդացության դեպքերի ավելացման հետևանքով (հատկապես ակտիվ զբոսաշրջային սեզոնին, երբ պահանջարկը հասնում է գագաթնակետին): Միևնույն ժամանակ Ծրագիրը կարող է նպաստել հիվանդանոցի հնարավորությունների ընդլայնմանը՝ նման ձևով չեզոքացնելով տվյալ ծառայությունների ավելացված պահանջարկի բացասական</p> | Աննշան                                  |                                      | Աննշան                                   |

| Աղյուսակ Error! No text of specified style in document..3. Ազդեցությունների համառոտագրում մինչ մեղմացումն ու մեղմացումից հետո՝ Աշխատողների ճամբար 9 |                |  |   |   |  |
|---|----------------|--|---|---|--|
| Սոցիալ-տնտեսական ազդեցություն   | Ծրագրի փուլ    | Ազդեցության նկարագրություն   | Ուժգնության դասակարգում մինչ մեղմացումը | Մեղմացման միջոցառումներ (Առաջարկվող)                              | Ուժգնության դասակարգում մեղմացումից հետո |
|   |                | ազդեցությունը:   |   |   |  |
| Տեղական բնակչության զբաղվածության ավելացում (Ճամբարի շինարարություն և ծառայություններ)  | Շինարարություն | Ծրագրի աշխատուժի բնակեցման նպատակով ճամբարի շինարարությունը կստեղծի նոր աշխատատեղեր տեղացի բնակչության համար՝ ինչպես շինարարության, այնպես էլ ճամբարային ծառայությունների մատակարարման առումով:<br>Ճամբարային հնարավորությունները Շահագործման փուլի ընթացքում օգտագործելու պարագայում, ստեղծված աշխատատեղերը կենթադրեն երկարաժամկետ օգուտներ (շարունակվելով նաև Ծրագրի ողջ շահագործման ընթացքում): | Շատ դրական                              | առկա չէ   | Շատ դրական                               |
|   | Շահագործում    |  | Միջին դրական                            |   | Միջին դրական                             |
|   | Փակում         |  | Աննշան                                  |   | Աննշան                                   |
| Տեղական գնումների ավելացում   | Շինարարություն | Տեղական ապրանքների ու ծառայությունների շուկայում կարող է արձանագրվել աճ, եթե Ծրագիրը՝  | Քիչ դրական                              | Ճամբարում գործող Ծրագրային կապալառուների (օրինակ՝ հանրային սնունդ |  |
|   | Շահագործում    |  | Քիչ դրական                              |   | Միջին                                    |



| Աղյուսակ Error! No text of specified style in document..3. Ազդեցությունների համառոտագրում մինչ մեղմացումն ու մեղմացումից հետո Աշխատողների ճամբար 9 |                |  |   |   |   |
|--|----------------|--|---|---|---|
| Սոցիալ-տնտեսական ազդեցություն  | Ծրագրի փուլ    | Ազդեցության նկարագրություն   | Ուժգնության դասակարգում մինչ մեղմացումը | Մեղմացման միջոցառումներ (Առաջարկվող)  | Ուժգնության դասակարգում մեղմացումից հետո  |
| (Ապրանքներ ու ծառայություններ)   | Փակում         | Ճամբարի պատշաճ կառավարման միջոցով, ջանքեր գործադրի տեղական բիզնեսներից ու ծառայություններ տրամադրողներից իրականացվող գնումները առավելագույնին հասցնելու ուղղությամբ:                         | Աննշան                                  | ապահովող ընկերությունների) հետ կնքվող պայմանագրերում ներառել տեղական գնումների վերաբերյալ դրույթներ: Առավելագույնին հասցնել ճամբարի շինարարության գործընթացում տեղական կապալառուների ներգրավվածությունը: Իրականացնել մատակարարների զարգացման ծրագրեր: | դրական  |
|  |                |  |   |   |   |
| Անբարենպաստ ազդեցություններ համայնքների առողջապահության, անվտանգության և   | Շինարարություն | Ջերմուկ համայնքում ոչ-տեղացի աշխատուժի ներկայությունը կարող է ունենալ բացասական ազդեցություն համայնքային առողջապահության, անվտանգության և ապահովության մասով: Աշխատուժի ներհոսքը ենթադրում է | Միջին բացասական                         | Իրականացնել իրազեկման ծրագրեր (օրինակ՝ սեռավարակների վերաբերյալ)  | Քիչ բացասական   |
|  | Շահագործում    |  | Քիչ բացասական                           |   | Աննշան  |
|  | Փակում         |  |   |   | Առաջարկել կոնֆիդենցիալ ստուգումներ սեռավարակների և այլ վարակիչ հիվանդությունների հայտնաբերման նպատակով: |

| Աղյուսակ Error! No text of specified style in document..3. Ազդեցությունների համառոտագրում մինչ մեղմացումն ու մեղմացումից հետո Աշխատողների ճամբար 9 |                |  |   |   |  |
|--|----------------|--|---|---|--|
| Սոցիալ-տնտեսական ազդեցություն  | Ծրագրի փուլ    | Ազդեցության նկարագրություն   | Ուժգնության դասակարգում մինչ մեղմացումը | Մեղմացման միջոցառումներ (Առաջարկվող)  | Ուժգնության դասակարգում մեղմացումից հետո |
| ապահովության մասով   |                | տարափոխիկ հիվանդությունների (օրինակ՝ սեռավարակների, հարբուխի և այլնի) թվի ավելացում:<br>Ծրագրի աշխատուժի բնակեցումը ճամբարում սահմանափակում է տեղական համայնքի հետ փոխներգործության հնարավորությունները՝ կրճատելով վերոգրյալի հավանականությունը:                   |   | Ավելացնել տեղական առողջապահական ծառայությունների հնարավորությունները:<br>Հնարավորինս նվազեցնել աշխատողների և համայնքի միջև փոխհարաբերությունները (Վարքականոնների կիրառմամբ) |  |
| Հյուրանոցային կամ այլ տեղական բիզնեսների աշխատողների արտահոսք դեպի ճամբար  | Շինարարություն | Քանի որ Ծրագրի աշխատուժի բնակեցման համար անհրաժեշտ ճամբարի շինարարությունն ու շահագործումը ենթադրում է փորձառու անձնակազմի ներգրավում, ինչպես շինարարության/սպասարկման, այնպես էլ բնակեցման/հյուրանոցային ծառայությունների համար, հնարավոր է որ Ծրագիրը կներգրավվի | Միջին բացասական                         | Մշակել նոր տեղական զբաղվածության պլան՝ նախատեսված ինչպես տեղական աշխատուժի, այնպես էլ տեղական բիզնեսների կարիքների համար:<br>Հնարավորության դեպքում անհրաժեշտ է կենտրոնանալ | Քիչ բացասական                            |
|  | Շահագործում    |  | Քիչ բացասական                           |   | Աննշան                                   |
|  | Փակում         |  | Աննշան                                  |   | Աննշան                                   |



| <b>Աղյուսակ Error! No text of specified style in document..3. Ազդեցությունների համառոտագրում մինչ մեղմացումն ու մեղմացումից հետո՝ Աշխատողների ճամբար՝</b> |                    |  |  |   |   |
|---|--------------------|--|--|---|---|
| <b>Սոցիալ-տնտեսական ազդեցություն</b>  | <b>Ծրագրի փուլ</b> | <b>Ազդեցության նկարագրություն</b>  | <b>Ուժգնության դասակարգում մինչ մեղմացումը</b> | <b>Մեղմացման միջոցառումներ (Առաջարկվող)</b> | <b>Ուժգնության դասակարգում մեղմացումից հետո</b> |
|   |                    | հյուրանոցներում կամ այլ տեղական բիզնեսներում ներկայումս աշխատող աշխատողների, ինչը կարող է բացասաբար ազդել դրանց դրա, քանի որ նույն այդ բիզնեսները ստիպված կլինեն առաջարկել ավելի բարձր (Ծրագրի համեմատ “մրցունակ”) աշխատավարձ և/կամ ձեռնարկել նոր հավաքագրման/վերապատրաստման միջոցներ: |  | ներկայումս չաշխատող մարդկանց վրա:           |   |



### **6.21.11 Հանքի շինարարության փուլի ազդեցությունները**

#### **Հնարավոր ազդեցություններ**

Ծրագրի կողմից Ջերմուկի առկա հյուրանոցային հնարավորությունների օգտագործումը, մասնավորապես՝ ակտիվ զբոսաշրջային սեզոնի ընթացքում, կարող է ազդել այլ այցելուներին տեղավորելու հնարավորության վրա՝ ունենալով ժամանակավոր բացասական ազդեցություն զբոսաշրջության բնագավառի վրա, որը տասնամյակներ շարունակ եղել է տեղական տնտեսության հիմնական ուղղությունը: Ծրագրի շինարարության փուլի ընթացքում հյուրանոցների ամբողջական կամ բարձր զբաղեցումը կարող է ստեղծել հյուրանոցների մշտապես զբաղված լինելու կարծիք, ինչը կհանգեցնի հյուրանոցների ավանդական հաճախորդների մասնակի կորստին:

Որոշ տեղական բիզնեսներ, որոնք գլխավորապես զբաղված են տուրիստների հետ իրականացվող սեզոնային առևտրում (օրինակ՝ տեղական/տարածաշրջանային ապրանքներ վաճառողները, զբոսավարները, ռեստորաններն ու այլոք) կարող են կրել ժամանակավոր բացասական ազդեցություններ՝ որոշ հյուրանոցներում ավանդական զբոսաշրջիկներին Ծրագրի աշխատողներով “փոխարինելու” հետ կապված, քանի որ Ծրագրի աշխատողների կողմից վերոնշյալ ապրանքների կամ ծառայությունների ձեռքբերումը քիչ հավանական է:

Ծրագրի կողմից տեղական հյուրանոցների օգտագործումը կարող է նպաստել այցելուների մոտ Ջերմուկի՝ որպես առողջարանային քաղաքի, ընկալման փոփոխությանը: Ընկալման նման փոփոխությունը կարող է հանգեցնել ավելի նյութական ազդեցությունների, որոնցից են՝ Ջերմուկի այցելուների թվի անկում, ինչը տեղական զբոսաշրջային ու հյուրանոցային բիզնեսի և ընդհանուր առմամբ տեղական տնտեսության համար հանդիսանում է բացասական ազդեցություն:

Սեփական համայնքի ընկալումը տեղացի բնակչության կողմից կարող է փոխվել Հանքի զարգացման պատճառով, մասնավորապես՝ համայնքում մշտապես ներկա աշխատուժի հետ կապված: Սա կարող է ազդել սոցիալական կապիտալի (մթնոլորտի) և համայնքում անվտանգության ընկալման վրա: Այս ազդեցությունը որոշ չափով հնարավոր կլինի

մեղմել ճամբարային բնակեցման տարբերակը ընտրելու պարագայում:

Բնակեցման համար ընտրված տարբերակից անկախ՝ Ծրագրի ոչ տեղացի աշխատուժի ներկայությունը կարող է ազդել համայնքում տարափոփիկ հիվանդությունների, օրինակ՝ սեռավարակների, թվի վրա:

Տեղական համայնքի ներկայացուցիչների հետ անցկացված հարցազրույցները փաստում են, որ աշխատողների բնակեցումը հյուրանոցներում կարող է առաջացնել որոշակի մարտահրավերներ մունիցիպալ ռեսուրսների և ծառայությունների մատակարարման առումով, մասնավորապես՝ ձյան հեռացման ու աղբի հավաքման մասով: Քաղաքապետարանը ստիպված կլինի ներգրավել լրացուցիչ ռեսուրսներ և/կամ սահմանել ավելի բարձր հարկեր/տուրքեր (հյուրանոցների նկատմամբ)՝ ֆինանսավորելու համար լրացուցիչ աշխատանքներն ու լրացուցիչ անձնակազմի աշխատավարձերը: Ճամբարի օգտագործումը կնվազեցնի այս ռիսկը և կարող է բացառել այն ամբողջությամբ՝ ճամբարում աշխատուժի ամբողջական կամ մեծամասնության բնակեցման պարագայում:

Բնակեցման երկու տարբերակներն էլ ենթադրում են տեղական համայնքում զբաղվածության աճ՝ որոշ անձանց համար շուրջտարյա զբաղվածության հեռանկարով, ինչը հանդիսանում է շատ դրական ազդեցություն: Ճամբարի օգտագործումը նույնպես ենթադրում է ավելի լայն հնարավորություններ տեղական գնումների ավելացման առումով, քանի որ ճամբարի և կապալառուների կառավարումը գտնվելու է Ծրագրի վերահսկման ներքո:

### ***Մեղմացման և խթանման միջոցառումներ***

Հյուրանոցների ընտրողական (այն է՝ սահմանափակ) օգտագործումը հանդիսանում է առաջարկվող մեղմացման միջոցառումներից մեկը, և այն կնվազեցնի Ծրագրի կողմից Ջերմուկ քաղաքում զբոսաշրջիկների բնակեցման վրա ակնկալվող զգալի ազդեցությունը:

Ջերմուկի տեղական զբոսաշրջային տնտեսության վրա ակնկալվող բացասական ազդեցությունները հնարավոր կլինի հասցնել նվազագույնին՝ սահմանափակելով տեղական հյուրանոցներում բնակվող Ծրագրի աշխատողների թիվը: Ծրագրի աշխատողների համար վարքականոնների պարտադրումը ուղղված է կանխելու աշխատողների պահվածքով պայմանավորված այլ այցելուների հետ հնարավոր խնդիրները:

Տուրիզմի զարգացման խրախուսումը (այդ թվում՝ խթանման միջոցառումներն ու բիզնեսի վարման հմտությունների ձևավորումը) կարող են դիտարկվել որպես հնարավորություն՝ Ծրագրի կողմից որոշ բացասական ազդեցությունները մեղմելու և բնագավառի երկարաժամկետ կենսունակությունն ապահովելու առումով:

Բնակեցման երկու տարբերակներից ակնկալվող դրական ազդեցությունները կամ օգուտները, օրինակ՝ տեղական բնակչության զբաղվածության և գնումների աճը, կարող են ընդլայնվել կամ հասցվել առավելագույնին տեղական զբաղվածության և մատակարարների զարգացման ծրագրերի միջոցով:

### ***Մնացորդային ազդեցություններ***

Ջերմուկում հյուրանոցների մասնակի զբաղեցման անհրաժեշտություն կարող է առաջանալ Ծրագրի շինարարության փուլի ընթացքում, ինչը ենթադրաբար կազդի ակտիվ զբոսաշրջային սեզոնի (մասնավորապես 2017թ-ին) ընթացում Ջերմուկում զբոսաշրջիկների բնակեցման վրա: Սակայն հաշվի առնելով տեղական հյուրանոցների միայն համեմատաբար փոքր մասի օգտագործման հավանականության փաստը՝ ակնկալվում է փոքր մնացորդային ազդեցություն:

Ջերմուկի՝ որպես առողջարանային քաղաքի ընկալման բացասական փոփոխությունը կարող է ունենալ երկարաժամկետ հետևանքներ՝ քաղաքի այցելուների թվի կրճատման առումով, ինչպես նաև տուրիզմի բնագավառի աճի հնարավորությունների և ընդհանուր տնտեսական ակտիվության մասով: Սա երևի թե ամենալուրջ հնարավոր ազդեցություններից մեկն է, որի վերացման համար Ծրագիրը ստիպված կլինի կիրառել մի շարք միջոցառումներ՝ ապահովելով դրանց պատշաճ մշտադիտարկում:

Բնակեցման երկու տարբերակներում էլ ակնկալվում է տեղացիների զբաղվածության մակարդակի աճ, ինչը կարող է ընդլայնվել կամ հասցվել առավելագույնին վերոնշյալ միջոցառումների մանրակրկիտ իրականացման արդյունքում: Զբաղվածության ազդեցությունները ենթադրվում է, որ կլինեն զգալի և նկատելի:

#### **6.21.12 Հանքի շահագործման փուլի ազդեցությունները**

##### ***Հնարավոր ազդեցություններ***

Ջերմուկի՝ որպես առողջարանային քաղաքի ընկալման փոփոխությունը, որն ակնկալվում է շինարարության փուլի ընթացքում, կարող է շարունակվել նաև շահագործման փուլի ընթացքում և ավելի երկար՝ հենց սկզբից այդ խնդիրը պատշաճորեն չլուծելու պարագայում:

Տեղացիների զբաղվածության աճն ու տեղական բիզնեսների զարգացումը կարող են դիտարկվել որպես Շահագործման փուլի ընթացքում Ծրագրի նկատելի ազդեցություններ, մասնավորապես եթե շինարարության փուլում պատշաճորեն իրականացվեն թիրախավորված միջոցառումներ: Մեկ այլ հարակից օգուտ է համարվում հմտությունների զարգացումը, որը սպասելի է տեղական աշխատուժի մեծամասնության պարագայում:

##### ***Մեղմացման և խթանման միջոցառումներ***

Հիմնականում, շահագործման փուլում նախատեսվում է կիրառել նույն այն մեղմացման միջոցառումները, որոնք սահմանվել են շինարարության փուլի համար:

Հյուրանոցների ընտրողական օգտագործումը հանդիսանում է շահագործման փուլի համար առաջարկվող մեղմացման միջոցառումներից մեկը, որը կնվազեցնի Ծրագրի կողմից Ջերմուկ քաղաքում զբոսաշրջիկների բնակեցման վրա ակնկալվող ազդեցությունը:

Տուրիզմի զարգացման խրախուսումը (այդ թվում՝ խթանման միջոցառումներն ու բիզնեսի վարման հմտությունների ձևավորումը)՝ որպես Ծրագրի կողմից որոշ

բացասական ազդեցությունները մեղմելու և բնագավառի երկարաժամկետ կենսունակությունն ապահովելու միջոց, նախատեսվում է շարունակել:

Բնակեցման երկու տարբերակներից ակնկալվող դրական ազդեցությունները կամ օգուտները, օրինակ՝ տեղական բնակչության զբաղվածության և գնումների աճը, կարող են ընդլայնվել կամ հասցվել առավելագույնին շահագործման փուլում տեղական զբաղվածության և մատակարարների զարգացման ծրագրերի իրականացման միջոցով:

### ***Մնացորդային ազդեցություններ***

Շինարարության փուլի համար սահմանված ազդեցությունների մեծամասնությունը կշարունակվեն նաև Ծրագրի ողջ ընթացքում: Որոշակի անհանգստություն է առաջացնում Ջերմուկի՝ որպես առողջարանային քաղաքի ընկալման փոփոխությունը: Տեղական զբոսաշրջության վրա ակնկալվող երկարաժամկետ հետևանքներից խուսափելու համար անհրաժեշտ է շինարարության փուլի ընթացքում ապահովել այդ խնդրի արդյունավետ լուծումը: Վերոնշյալ միջոցառումները կօգնեն նվազեցնել Ջերմուկի զբոսաշրջային բնագավառի համար ակնկալվող բացասական ազդեցությունները:

Չնայած որ ենթադրվում է, որ Ծրագրի զբաղվածության ազդեցությունները (մասնավորապես բնակեցման հետ կապված) ավելի զգալի կլինեն շինարարության փուլի ընթացքում, այնուամենայնիվ Ծրագրի շահագործման փուլի ընթացքում ակնկալվում է տեղական աշխատուժի (որպես Ծրագրի ողջ աշխատուժի մի մասի) ավելի լայն ներգրավում: Ավելին, տեղական մատակարարման զարգացման ծրագրերը կարող են ունենալ բիզնեսի զարգացման երկարաժամկետ հետևանքեր՝ տեղական մակարդակով:

### ***Հանքի փակման ազդեցություններ***

Ծրագրի փակման ժամանակահատվածում Ծրագրի աշխատուժի կողմից հյուրանոցների մեծածավալ զբաղեցում չի ակնկալվում, քանի որ աշխատողների փոքր մասը՝ դրանց առկայության պարագայում, կբնակեցվեն ճամբարում կամ

հյուրանոցներում: Փակման փուլի ընթացքում սպասվում է Ծրագրի աշխատուժի կտրուկ նվազում մինչև մոտ 20-30 հոգի: Հետևաբար, փակման փուլի ընթացքում աշխատողների բնակեցման ընդհանուր ազդեցությունը կլինի աննշան:

### ***Եզրակացություններ***

*“Աշխատողների բնակեցում. Ընթացակարգն ու չափանիշները”* ՄՖԿ/ՎՋԵԲ-ի ուղեցույցը նախատեսում է տեղական համայնքների վրա աշխատողների բնակեցման տարբերակների հնարավոր ազդեցությունների գնահատման իրականացում: Այս գլխում կատարվել է Ծրագրի աշխատողների բնակեցման տարբերակների սոցիալական ազդեցությունների գնահատում և առաջարկվել են մեղմացման միջոցառումներ:

Ծրագրի շրջանակներում աշխատողների բնակեցման համար ընտրված տարբերակները կունենան որոշակի ազդեցություններ տեղական տնտեսության, համայնքի առողջապահության և անվտանգության, համայնքային ենթակառուցվածքների և հավանաբար Ջերմուկ քաղաքի սոցիալական կապիտալի վրա:

Բացասական սոցիալական ազդեցությունները ներառում են Ջերմուկ քաղաքի ընկալման փոփոխություն, ինչը ենթադրում է որոշակի հետևանքներ ինչպես տեղական տնտեսության, այնպես էլ սոցիալական կապիտալի համար: Ջերմուկում Ծրագրի ոչ տեղացի աշխատուժի ներկայությունը նույնպես կարող է ազդել տեղացիների կողմից իրենց սեփական համայնքի ընկալման վրա, այդ թվում՝ անվտանգության առումով, այս խնդիրը կառաջանա աշխատուժի բնակեցման վայրից անկախ, չնայած որ ճամբարային տարբերակը կօգնի մեղմել այդ ազդեցությունը՝ սահմանափակելով աշխատողների և տեղական համայնքների միջև փոխներգործությունը: Հնարավոր է նաև տարափոխիկ հիվանդությունների, այդ թվում՝ սեռավարակների թվի ավելացում, ինչը պայմանավորված է ոչ տեղացի աշխատուժի ներկայությամբ և ինչը ենթադրում է մշակութային առումով համապատասխանեցված հաղորդակցման ու իրազեկման բարձրացման (ինչպես նաև տեղացի հանրային առողջապահության մասնագետների վերապատրաստման) միջոցառումների իրականացում:

Համապատասխան մեղմացման միջոցառումների շնորհիվ որոշ բացասական ազդեցությունները հնարավոր կլինի դարձնել դրական: Օրինակ՝ Ծրագրի կողմից տեղական աշխատողների կամ մատակարարների ներգրավման իրական կամ ենթադրյալ ցածր մակարդակը հնարավոր կլինի բարձրացնել տեղական զբաղվածության և մատակարարման զարգացման պլանների մշակմամբ ու իրագործմամբ:

Ճամբարի շինարարությունն ու շահագործումը ենթադրում են շոշափելի օգուտներ՝ ուղղակի և անուղղակի զբաղվածության և տեղական գնումների ձևով: Տեղական հյուրանոցների օգտագործումը ենթադրում է հստակ (զուտ) օգուտներ տեղական բիզնեսի և զբաղվածության առումով միայն պասիվ զբոսաշրջային սեզոնների ընթացքում, երբ հյուրանոցների մեծամասնությունը որպես կանոն կանգնում են թերզբաղվածության խնդրի առաջ:

Ընդհանուր առմամբ, ավտոնոմ ճամբարի օգտագործումը ենթադրում է ավելի քիչ բացասական սոցիալական ազդեցություններ՝ Ջերմուկի առկա հյուրանոցների լայնածավալ օգտագործման տարբերակի համեմատ: Այս գնահատման հիմքում ընկած էր այն նախապայմանը, որ ընտրված տարբերակը կհամակցի ինչպես հյուրանոցների օգտագործումը, այնպես էլ ճամբարի շինարարությունը: